տէր դառնալ։ Կամ նրանց տաճարներն ու սրբավայրերը հիմնայատակ քարուքանդ անելուց յետոյ, սոսկալի տանջանքներ տալով մահմեդական կրօնն ընդունել տալ և ապա մարդկանց ու տեղագրական անուններն այն աստիճան փոփոխել և թրքացնել, որ քրիստոնէութեան հետքն անգամ չմնար աշխարհիս վրայ։ Ի զուր չէ ասուած, թէ «որ և է մահմեդականի ձիու սմբակով ոտք կոխած տեղը այլևս երբէք խոտ չի բուսնի»։ Ահա այսպէս, Մահմեդական կրօնին հետևող լեռնականների ժոլեռանդ և արիւնարբու զաւակները քարուքանդ արին Ուտիացոց և Աղուանից երկրները։

Ինչպէս ասացի, Հայ քրիստոնեայ բնակչութեան մի մասը բնաջինջ արին — կոտորեցին անխնայաբար, մի մասը սոսկալի տանջանքների ենթարկելով, բռնութեամբ դարձրին մահմեդական, իսկ միւս ամենամեծ մասը գերի տարան և բշնցին Պարսկաստանի խորքերը։ Աւանդաբար ծերունիները պատմում են, որ դարերի ընթացքում Աղուանից և Ուտիացոց երկրներից տարուած անթիւ ու անհամար հայ քրիստոնեաներից սերուելով և հետզհետէ աճելով ու բազմանալով են գոյացել այժմեան Աղուանիստանն ու Բելուջիստանը։ Այս բանը հաւանական է թւում հէնց այն բանից, որ այդ երկու երկրների անուններից Հայերէն լեզուի հոտ է բուրում։—Աւղանստան, որ նշանակում է Աւղանների բնակուած տուն, իսկ Բել-Ուտիստան՝ աղաւաղուել և մահմեդականների բերանում փոփոխուելով՝ դարձել